Նախագիծ

ԴԵՂԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԲԻՈՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐ

ՈԼՈՐՏԱՅԻՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

2011-2020

Ներկա իրավիճակի ամփոփ ակնարկ

Հիմնական ցուցանիշներ

Վաճառքը, 2010թ., ԱՄՆ դոլար	8,800,000
Վաճառքի աճը (ՀՀ դրամով), 2003-2010թթ.	12.5%
Ընկերությունների քանակ	13
Զբաղվածների քանակ	507
Արտահանում, 2010 (ԱՄՆ դոլար)	5,013,630
Արտահանման դինամիկա, 2003-2007	28.9%
Արտահանման դինամիկա, 2007-2010	17.7%
Արտահանման կշիռը վաճառքի մեջ, 2010թ.	57.3%
Արտահանման հիմնական շուկաները և դրանց կշիռը, 2010թ.	Վրաստան -38% Ռուսաստան-18% Ուզբեկստան-13% Բելառուս - 6% Ուկրաինա - 5% Կատար - 4%

Հիմնական արտադրող ընկերությունները

«Արփիմեդ» ՍՊԸ «Երևանի քիմիա-դեղագործական ֆիրմա» ԲԲԸ «Էսկուլապ» ՍՊԸ «Լիկվոր» ՓԲԸ «Հազենաս» ՍՊԸ	«Մեդիկալ Հորիզոն» ՍՊԸ «Նարեքս» ՍՊԸ «Վիտամաքս-Ե» ՍՊԸ «Ֆարմատեք» ՓԲԸ

Ոլորտի ներկա բնութագիրը*

- Հայաստանի ամենադինամիկ աճող ճյուղերից մեկը (12.5% տարեկան միջին աճ 2003-2010թթ.)
- Արտահանման բարձր կողմնորոշվածություն (արտահանման բաժինը թողարկման մեջ 57% 2010թ.-ին)
- Դեղագործությունը Հայաստանի արտահանման եզակի ոլորտներից է, որ գրանցել է արտահանման աճ գլոբալ ֆինանսական ճգնաժամի տարիներին
- Դիվերսիֆիկացված արտահանման շուկաներ (Վրաստան -38%, Ռուսաստան-18%, Ուզբեկստան-13%, Բելառուս - 6%, Ուկրաինա - 5%, Կատար - 4%, 2010թ.)
- Հիմնական արտադրողների արտադրական հզորությունների ընդլայնում (Ֆարմատեք, Լիկվոր, Արփիմեդ, Էսկուլապ)
- Նոր արտադրական հզորությունների կառուցման ընթացիկ նախագծեր
- Նորարարական նախագծեր բիոտեխնոլոգիաների բնագավառում

* Դեղագործություն և բիոտեխնոլոգիաներ ոլորտը ներառում է դեղերի, դեղանյութերի, սննդային հավելումների, դեղաբույսերի և դրանց հիմքով դեղերի արտադրությունները, ինչպես նաև մասնագիտացված ծառայություն մատուցող փորձագիտական և հետազոտական կազմակերպությունները:

ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄՐՑԱԿՑՈՒԹՅՈՒՆ

ԳՈՐԾՈՆՆԵՐ / ՆԵՐԴՐԱՆՔՆԵՐ

- Հումքը հիմնականում ներմուծվում է
+ Կապիտալ ներդրումների աճ վերջին տարիներին, որն ուղղված է արտադրական հզորությունների տեխնոլոգիական վերազինմանը և համապատասխանեցմանը որակի միջազգային պահանջներին
-/+ Համագործակցություն կրթական համակարգի հետ, սակայն այն դեռ չի ապահովում որակյալ կադրեր
+ Համագործակցություն ընկերությունների միջև
+ Պատշաճ արտադրական գործունեության վերահսկման և սերտիֆիկացման համակարգի ներդնում 2013թ.-ից
+/- Մրցակցություն շուկայի միջին արժեքային սեգմենտում (բրենդավորված ջեներիկ դեղեր)
- Հետազոտությունների և մշակումների (ՀուՄ) ցածր մակարդակ

ՀԱՐԱԿԻՑ ՈՒՂՈՐՏՆԵՐ

+ Զարգացող տպագրական ոլորտ, որն ապահովում է համապատասխան արտաքին փաթեթավորում
+ Այլումինի փայլաթիթեղի տեղական արտադրողի առկայություն
+ Կայացած ասոցիացիա և ուսումնական կենտրոն
+ Տեխնիկապես վերազինված և մասնագետներով դեղերի փորձաքննության լաբորատորիա
- Գիտահետազոտական ինստիտուտների հետ համագործակցության ցածր մակարդակ և նրանց կարողությունների դեգրադացիա

ՊԱՀԱՆՋԱՐԿ

+ Տեղական շուկայում ընդլայնման մեծ հնարավորություններ (տեղական արտադրանքն ապահովում է ներքին պահանջարկի միայն 4-5%-ը)
+ Ազատ առևտրի ռեժիմ Վրաստանի և ԱՊՀ երկրների հետ
+ Նոր շուկաների հնարավորություններ Մերձավոր Արևելքի և Աֆրիկայի երկրներում
+ Անդրազգային ընկերությունների արտադրական պատվերների ներգրավման հնարավորություն (ընթացքում է GlaxoSmithKline-ի կողմից դեղերի փաթեթավորման գործընթացի արտապատվիրումը Հայաստան Սփյուքի կապերի շնորհիվ)
+ Գլոբալ արտահանման ծավալների աճ (տարեկան 16% 2003-2009թթ.) և դրական կանխատեսումներ մոտակա 5 տարիների համար
- Տեղական արտադրանքը հիմնականում սպառվում է Վրաստանի և ԱՊՀ շուկաներում, որտեղ դեռևս խիստ չեն որակի նկատմամբ պահանջները

2010	2015	2020
Արտադրություն՝ 8 մլն դոլար	**Արտադրություն՝** 30-35 մլն դոլար	**Արտադրություն՝** 95-135 մլն դոլար
Արտահանում՝ 5 մլն դոլար	**Արտահանում՝** 20-25 մլն դոլար *այդ թվում՝* *10-15 մլն դոլար ԱԱԿ պատվերներ*	**Արտահանում՝** 75 -115 մլն դոլար *այդ թվում՝* *50-90մլն դոլար ԱԱԿ պատվերներ*
Աշխատողներ՝ 550	**Աշխատողներ՝** 900-950	**Աշխատողներ՝** 1,600-1,800
Տեղական արտադրող ընկերություններ, որոնք արտահանում են Վրաստան և ԱՊՀ երկրներ	• Առկա շուկաներում վաճառքների մեծացում • Մուտք նոր շուկաներ (Մերձավոր Արևելք) • ԱԱԿ-ների պատվերների իրականացում (հիմնականում փաթեթավորման գործընթացների)	• Նոր շուկաներում վաճառքների ավելացում • ԱԱԿ-ների պատվերների իրականացման ծավալների ընդլայնում, որը կներառի նաև արտադրական գործընթացներ և լոգիստիկ գործունեություն
Արտահանման ծավալներով համադրելի երկրներ՝ Նիգերիա, Նիկարագուա, Ֆիջի	**Արտահանման ծավալներով համադրելի երկրներ՝** Էստոնիա, Ֆիլիպիններ, Սաուդյան Արաբիա	**Արտահանման ծավալներով համադրելի երկրներ՝** Լյուքսեմբուրգ, Բելառուս, Մարոկկո, Չիլի, Ուրուգվայ

Ռազմավարության կիզակետերը

2011-2015

Հայկական արտադրանք

- Հայկական արտադրանքների վաճառքների ավելացում առկա շուկաներում (Հայաստան և ԱՊՀ)
- Մուտք Մերձավոր Արևելքի շուկաներ (համագործակցելով տարածաշրջանի ընկերությունների հետ)
- Հայկական արտադրողների ՊԱԳ (ներառյալ անհրաժեշտ այլ գործունեությունները) հավաստագրում
- Արտադրական կարողությունների զարգացման ներդրումային ֆինանսավորում և արտահանման ֆինանսավորման նոր գործիքների ստեղծում
- Աջակցություն մասնագիտական կրթության բարելավմանը

Արտապատվիրում

- Առաջատար անդրազգային ընկերության պատվերների ներգրավում Հայաստան
- Աջակցություն հայկական ընկերությունների արտապատվիրման բնագավառում պատվերներ գտնելու գործում (թիրախավորելով հատկապես Մերձավոր Արևելքի և Աֆրիկայի երկրները)

2015-2020

Հայկական արտադրանք

- Մերձավոր Արևելքի շուկաներում վաճառքների ընդլայնում
- Հայկական պատշաճ գործունեությունների հավաստագրերի միջազգային ճանաչում
- Արտոնագրային ժամկետը լրացած դեղերի հիման վրա հայկական բրենդավորված նոր ջենեռիկ դեղերի արտադրություն

Արտապատվիրում

- Արտապատվիրման ոլորտում փաթեթավորումից անցում դեղերի արտադրության գործընթացի իրականացման
- Օգտագործելով առաջատար անդրազգային ընկերության Հայաստանում աշխատելու փաստը՝ բանակցել այլ գլոբալ ընկերությունների հետ Հայաստանում արտադրությունների հիմնման կամ արտադրությունների արտապատվիրման ոլորտում
- Աջակցել հայկական ընկերությունների արտապատվիրման աշխատանքների իրականացման կարողությունների զարգացմանը
- Անհրաժեշտության դեպքում նոր ազատ տնտեսական գոտու հիմնում

2010-2015 թ. Նախաձեռնություններ

1 ՈՐԱԿԻ ՎԵՐԱՀՍԿՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՍՏԵՂԾՈՒՄ

3.1. Պատշաճ արտադրական գործունեության (ՊԱԳ), պատշաճ բաշխման գործունեության (ՊԲԳ), պատշաճ լաբորատոր գործունեության (ՊԼԳ) և դեղերի արտադրության հետ կապված այլ պատշաճ գործունեությունների իրավական դաշտի ամբողջականացում և ՊԳ հավաստագրման իրականացում

3.2. ՊԱԳ հավաստագրման մարմնի կողմից տրվող հավաստագրերի միջազգային ճանաչման գործընթաց (անդամակցություն Դեղերի արտադրության տեսչական ստուգումների փոխադարձ ճանաչման կոնվենցիային- 37 անդամ)

3.1. Հայկական ընկերություններին աջակցություն արտադրությունների Պատշաճ արտադրական գործունեության (ՊԱԳ) պահանջներին համապատասխանեցման համար

2 ՏԵՂԱԿԱՆ ՀՈՒՄՔԱՅԻՆ ԲԱԶԱՅԻ ՍՏԵՂԾՈՒՄ

4.1. Իրականացնել ակտիվ դեղագործական բաղադրիչների Հայաստանում արտադրության հիմնման իրագործելիության ուսումնասիրություն (Հայաստանի Գիտությունների Ազգային Ակադեմիայի Ա.Լ. Մնջոյանի անվան Նուրբ օրգանական քիմիայի ինստիտուտի բազայի վրա):

4.2. Իրագործելիության ուսումնասիրության դրական արդյունքների դեպքում իրականացնել ներդրումներ արտադրության հիմնման ուղղությամբ: Հնարավոր տարբերակներից կարող է լինել համատեղ ձեռնարկության ստեղծումը հայկական դեղ արտադրողների հետ համատեղ:

3 ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ

4.1. Աջակցություն Դեղեր արտադրողների և ներմուծողների ասոցիացիայի «Ձի էքս Պի» գերազանցության կենտրոնին (GxP Center of Excellence) վերապատրաստման դասընթացների մշակման և իրականացման գործում (միջազգային փորձագետների ներգրավում)

4.2. Մասնագիտական կրթության բարելավում համագործակցելով «Ձի էքս Պի» կենտրոնի հետ, հատկապես դեղերի տեխնոլոգների մասնագիտացման ներդրման բնագավառում:

2010-2015 թ. Նախաձեռնություններ

4 ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ

4.1. Ընկերությունների արտադրական հզորությունների ընդլայնման ներդրումային ծրագրերի երկարաժամկետ ֆինանսավորման մեխանիզմի ապահովում (7 տարուց ավել)

4.2. Պայմանագրերի հիման վրա արտահանման ֆինանսավորում և ֆակտորինգ

4.3. Նորարարական նախագծերի վենչուրային ֆինանսավորում

4.4. Հետազոտական դրամաշնորհներ ընկերություններին, հատկապես արտոնագրային դեղերի արտոնագրման ժամկետը լրանալուց հետո, դրանց հիման վրա բրենդավորված ջենեռիկ դեղեր արտադրելու համար (2013 թ.-ից սկսած լրանում են զգալի թվով առաջատար դեղերի արտոնագրերի ժամկետները)

5 ԱԱԿ ՆԵՐԳՐԱՎՈՒՄ

5.1. Նպաստել առաջատար անդրազգային ընկերության կողմից դեղերի փաթեթավորման գործընթացի արտապատվիրմանը Հայաստան

5.2. Օգտագործելով Սփյուռքի գործարար և մասնագիտական կապերը՝ խրախուսել միջազգային ընկերությունների արտադրությունների կամ պատվերների իրականացումը Հայաստանում (նախօրոք ստեղծելով Սփյուռքի ներկայացուցիչների տվյալների բազա)

6 ՎԱՃԱՌՔՆԵՐԻ ԽԹԱՆՈՒՄ

6.1. Շուկաների մասին տեղեկացվածության և խորհրդատվության ապահովում

6.2. Նպատակային շուկաներում հայ արտադրողների և տեղական շուկայի հիմնական մասնակիցների (դիստրիբյուտորներ, առողջապահության ոլորտի հիմնական որոշում կայացնողներ) հետ գործարար ֆորումների կազմակերպում

6.3. Մասնագիտական կոնֆերանսների կազմակերպման աջակցություն

6.4. Ներքին շուկայում տեղական արտադրանքի վաճառքների խթանում իրազեկության բարձրացման միջոցով (հեռուստահաղորդումներ հայ արտադրողների վերաբերյալ. կարելի է համակցել ՊԱԳ հավաստագրման գործընթացի հետ)

Ժամանակացույց և ծախսերի գնահատական

Նախաձեռնություն	Իրականացնող / ֆինանսավորող մարմին	Ժամկետ	Ծախսերի գնահատում	Պետության և դոնորների մասնակցության բաժինը
Ռազմավարության կազմակերպական կառույցների ձևավորում				
Ռազմավարության և գործողությունների ծրագրի համաձայնեցում արտադրողների հետ և ռազմավարական խորհրդի ստեղծում	ՀՀ էկոնոմիկայի նախարարություն	2011 թ. դեկտեմբեր	-	-
ԶՀԳ-ում համապատասխան ստորաբաժանման ստեղծում	ՀՀ էկոնոմիկայի նախարարություն	2012-2015	~15 մլն ՀՀ դր. (40 հազ. ԱՄՆ դոլար) տարեկան	100%
1. Որակի վերահսկման համակարգի ներդնում				
1.1 ՊԱԳ եվրոպական կանոնակարգերի թարգմանություն և տեղայնացում	ՀՀ առողջապահության նախարարություն և Դեղերի գործակալություն*	2011	18-26 մլն. ՀՀ դրամ (50-70,000 դոլար)	100%
1.2 ՊԱԳ հավաստագրման համակարգի գործարկում և միջազգային ճանաչման աշխատանքների իրականացում	ՀՀ առողջապահության նախարարություն և Դեղերի գործակալություն	2013թ.- ՊԱԳ հավաստագրում 2017-2018թ.- ՊԱԳ միջազգային ճանաչում	Իրականացվում է Դեղերի գործակալության լիազորությունների շրջանակում	100%

* Դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն

Ժամանակացույց և ծախսերի գնահատական

Նախաձեռնություն	Իրականացնող / ֆինանսավորող մարմին	Ժամկետ	Ծախսերի գնահատում	Պետության և դոնորների մասնակցության բաժինը
1.3 Խորհրդատվություն արտադրողներին ՊԱԳ ներդրման բնագավառում	Դեղերի գործակալություն, ԴԱՆ միության	2010-2013թթ.	Իրականացվում է Դեղերի գործակալության լիազորությունների շրջանակում «Ձի էքս Պի» կենտրոնի հետ համատեղ	100%
2. Տեղական հումքային բազայի ստեղծում				
2.1 Հումքի արտադրության հիմնման իրագործելիության ուսումնասիրություն	Մասնագիտական խորհրդատվական ընկերություն	2012թ.	~ 11 մլն. ՀՀ դրամ (30,000 դոլար)	100%
2.2 Հայաստանում հումքի արտադրության հիմնում	Համահայկական բանկ, ՓՄՁ Ներդրումներ ՈՒՎԿ	Մինչև 2013թ.	Իրագործելիության ուսումնասիրության արդյունք	
3. Ընկերությունների կարողությունների զարգացում				
3.1 Վերապատրաստման դասընթացների մշակում և իրականացում	ԴԱՆ միության GxP ուսումնական կենտրոն	2012-2015թթ.	Տարեկան ~ 22 մլն. ՀՀ դրամ (60.000 դոլար)	80%
4. Ֆինանսական աջակցություն				
4.1 Ներդրումների ֆինանսավորում	Համահայկական բանկ, ՓՄՁ Ներդրումներ ՈՒՎԿ	2011-2015թթ.	Ենթակա է կարիքի գնահատման	
4.2 Արտահանման ֆինանսավորման մեխանիզմի գործարկում	ՓՄՁ Ներդրումներ ՈՒՎԿ, Համահայկական բանկ	Մինչև 2012թ. վերջ	Ենթակա է կարիքի գնահատման	

Ժամանակացույց և ծախսերի գնահատական

Նախաձեռնություն	Իրականացնող / ֆինանսավորող մարմին	Ժամկետ	Ծախսերի գնահատում	Պետության և դոնորների մասնակցության բաժինը
4.3 Նորարարական նախագծերի վենչուրային ֆինանսավորում	Վենչուրային հիմնադրամ	2012-2015թթ.	Ենթակա է կարիքի գնահատման	
4.4 Նորարարության հետազոտական դրամաշնորհներ	Պետական լիազոր մարմին*	2013-2015 թթ.	Ենթակա է կարիքի գնահատման	
5. ԱԱԿ ներգրավում				
5.1 Նպաստել GlaxoSmithKline-ի կողմից դեղերի փաթեթավորման գործընթացի արտապատվիրմանը Հայաստան	ՀՀ էկոնոմիկայի նախարարություն	2011թ.	Ըստ անհրաժեշտության	100%
5.2. Այլ ԱԱԿ-ների արտադրությունների կամ պատվերների ներգրավում	Պետական լիազոր մարմին համագործակցելով Սփյուռքի ներկայացուցիչների հետ	2012 – 2015 թթ.	37.5 մլն ՀՀ դրամ (100,000 ԱՄՆ դոլար)	50%
6. Վաճառքների խթանում				
6.1 Արտահանման շուկաների մասին տեղեկատվություն և խորհրդատվություն	Պետական լիազոր մարմին համագործակցելով ԴԱՆ միության և ընկերությունների հետ	2012-2015 թթ.	Տարեկան 7.5 մլն. ՀՀ դրամ (20,000 դոլար)	100%

*Պետական լիազոր մարմինը կարող է հանդիսանալ Հայկական զարգացման գործակալությունը կամ պետության կողմից նշանակված այլ կառույց:

Ժամանակացույց և ծախսերի գնահատական

Նախաձեռնություն	Իրականացնող / ֆինանսավորող մարմին	Ժամկետ	Ծախսերի գնահատում	Պետության և դոնորների մասնակցության բաժինը
6.2 Գործարար ֆորումների կազմակերպում	Պետական լիազոր մարմին համագործակցելով ԴԱՆ միության և ընկերությունների հետ	2012-2015թթ.	Տարեկան ~37.5 մլն. ՀՀ դրամ (100,000 դոլար) (4 ֆորում նպատակային երկրներում)	50%
6.3 Աջակցություն մասնագիտական համաժողովներին	Ընկերություններ, ԴԱՆ միություն, Պետական լիազոր մարմին, ՀՀ դեսպանատներ	2012-2015թթ.	Ծախսերը ենթակա են գնահատման և էականորեն կարող են տարբերվել ըստ համաժողովի	37 մլն դրամ (100,000 դոլար) տարեկան
6.4 Նպատակային շուկաների հիմնական դիստրիբյուտորների այցելություններ	Պետական լիազոր մարմին, Ընկերություններ, ԴԱՆ միություն	2012-2015թթ.	Տարեկան 15 մլն. ՀՀ դրամ (40,000 դոլար)	100%
6.5 Ներքին շուկայում տեղական արտադրանքի վաճառքների խթանում իրազեկության բարձրացման միջոցով	Պետական լիազոր մարմին, Ընկերություններ, ԴԱՆ միություն	2011-2015թթ.		Հեռուստաթեթեր հանրային հեռուստա-տեսությամբ

Ընդհանուր պետական ծախսեր, 2011 – 2015 թթ.	~550 մլն. ՀՀ դրամ (1.5 մլն. ԱՄՆ դոլար)*

* Նշված գումարը չի ներառում 2.2, 4.1, 4.2, 4.3, 4.4, 5.1, 6.5 նախաձեռնությունների ծախսերը:

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

Դեղագործության և բիոտեխնոլոգիաների ոլորտի հիմնական ցուցանիշները

Արտահանման ծավալը և կշիռը ոլորտի թողարկման մեջ



Աղբյուր՝ UN Comtrade առցանց տվյալների բազա, ՀՀ ԱՎԾ

Արտահանման հիմնական շուկաները և դրանց կշիռը



Աղբյուր՝ UN Comtrade առցանց տվյալների բազա

Դեղագործության ոլորտի թողարկումը և արտադրողականությունը



Աղբյուր՝ ՀՀ ԱՎԾ
Արտադրողականությունը հաշվարկվում է, որպես մեկ աշխատողի հաշվով թողարկման ծավալ:

Հայաստանի արտահանման շուկաները. ԱՊՀ և Վրաստան

	Բնակչություն, մլն. մարդ, 2010թ.	Ներմուծում, մլն. ԱՄՆ դոլար, 2010թ.	Տարեկան միջին աճ, 2003-2010թթ.	Հայաստանի մասնաբաժինը ներմուծման մեջ, %
Բելառուս	9.6	553.6	17%	0.054%
Վրաստան	4.5	216.5	16%	0.875%
Ղազախստան	16.3	924.8	23%	0.018%
Ղրղզստան	5.4	108.0	16%	0.079%
Մոլդովա	3.6	178.7	20%	0.084%
Ռուսաստան	141.8	11,111.5	25%	0.008%
Տաջիկստան	7.1	46.2	32%	0.334%
Թուրքմենստան	5.2	38.1	21%	0.000%
Ուկրաինա	45.8	2,445.8	22%	0.095%
Ուզբեկստան	28.2	278.1	21%	0.004%

Աղբյուր՝ UN Comtrade առցանց տվյալների բազա

- Հայաստանի արտահանման ներկայիս բոլոր շուկաներում դիտվում է ներմուծման դինամիկ աճ:
- Հայաստանի մասնաբաժինը բոլոր շուկաներում չի գերազանցում ներմուծման նույնիսկ 1%-ը:
- Ամենամեծ ներմուծող երկրներն են Ռուսաստանը, Ուկրաինան, Ղազախստանը և Բելառուսը: Այս շուկաներում, սակայն այս երկրներում մեծ է մրցակցությունը և առկա են ուժեղ տեղական արտադրողներ:
- Շուկայի հասունության ցածր մակարդակով և բնակչության մեծ թվաքանակով հեռանկարային է Ուզբեկստանի շուկան: Սակայն արժութային խիստ կարգավորումը լուրջ խոչընդոտներ է առաջացնում հայկական արտահանողների համար (վճարումների ուշացումներ):
- Այս շուկաներում հայ արտահանողները ծավալների ընդլայնման լուրջ ներուժ ունեն: Այս առումով օրինակելի է Վրաստանի փորձը, որի արտահանումը 2003-2010թթ. ընթացքում աճել է տարեկան 40%՝ 2010թ.-ին հասնելով 32 մլն դոլարի: Հիմնական շուկաները նույնպես ԱՊՀ երկրներն են: Մասնավորապես, վրացական 3 հիմնական արտահանողներն 2010թ.-ին Ուզբեկստան են արտահանել 6 մլն. դոլարի արտադրանք, այն դեպքում երբ, Հայաստանի արտահանումը կազմել է 0.7 մլն. դոլար:

ԱՊՀ և Վրաստանի շուկա ներմուծող հիմնական երկրների կշիռները, 2009թ.

	Բելառուս	Վրաստան	Ղազախստան	Ղրղզստան	Մոլդովա	Ռուսաստան	Տաջիկստան	Թուրքմենստան	Ուկրաինա	Ուզբեկստան	Բոլոր երկրները միասին
Գերմանիա	18.16%	9.34%	15.18%	5.04%	11.06%	18.00%	2.19%	9.14%	21.71%	11.02%	17.81%
Ավստրիա	6.93%	7.19%	14.07%	5.64%	4.29%	12.68%	2.19%	6.24%	9.97%	8.13%	11.75%
Հունգարիա	12.67%	10.12%	7.93%	9.23%	14.17%	8.44%	7.84%	10.63%	10.07%	10.13%	8.95%
Ֆրանսիա	5.10%	18.20%	5.21%	3.20%	1.81%	9.65%	1.49%	1.04%	6.26%	2.05%	8.44%
Շվեյցարիա	6.38%	5.59%	5.79%	3.63%	4.50%	9.59%	0.69%	4.81%	5.78%	3.55%	8.30%
Սլովենիա	4.03%	3.91%	5.91%	5.06%	5.16%	4.64%	4.00%	3.84%	5.01%	5.95%	4.78%
Բելգիա	2.76%	4.14%	3.79%	1.44%	1.02%	5.05%	2.50%	2.52%	4.85%	1.00%	4.65%
Հնդկաստան	3.68%	2.45%	7.02%	6.56%	3.50%	3.52%	14.72%	20.17%	6.57%	10.48%	4.50%
Ֆինլանդիա	0.86%	1.33%	1.62%	0.28%	0.68%	5.97%	0.00%	0.17%	1.26%	0.40%	4.45%
Մեծ Բրիտանիա	0.39%	0.79%	2.11%	0.04%	0.10%	3.01%	0.00%	0.05%	2.97%	0.11%	2.67%
Լեհաստան	7.27%	5.47%	4.61%	1.77%	1.48%	1.89%	0.16%	1.35%	3.51%	1.47%	2.52%
Ռուսաստան	0.00%	4.99%	9.89%	26.91%	9.33%	0.00%	27.69%	6.92%	4.55%	11.33%	2.08%
Նիդեռլանդներ	1.22%	1.31%	1.07%	1.02%	1.02%	2.20%	0.43%	0.23%	0.79%	1.14%	1.80%
Բուլղարիա	0.92%	5.61%	0.95%	0.44%	4.83%	1.66%	0.03%	1.10%	1.94%	2.43%	1.74%
Չեխիա	0.97%	0.45%	1.11%	1.66%	1.66%	1.50%	0.05%	0.64%	1.14%	2.90%	1.42%
Իտալիա	0.43%	0.85%	0.73%	0.27%	7.38%	1.56%	0.01%	0.45%	0.56%	0.28%	1.33%
Ուկրաինա	7.00%	3.74%	2.23%	3.59%	9.87%	0.31%	11.49%	6.62%	0.00%	11.40%	1.16%
Լատվիա	3.43%	1.94%	1.33%	0.82%	2.33%	0.97%	1.37%	0.55%	1.10%	0.95%	1.12%
Սլովակիա	0.25%	0.25%	1.34%	0.00%	0.65%	1.17%	0.61%	0.40%	0.96%	1.13%	1.08%
Հայաստան	**0.05%**	**0.90%**	**0.02%**	**0.00%**	**0.06%**	**0.01%**	**0.23%**	**0.00%**	**0.01%**	**0.23%**	**0.03%**
Այլ երկրներ	17.51%	11.46%	8.09%	23.40%	15.10%	8.16%	22.31%	23.11%	10.99%	13.95%	9.40%

Աղբյուր՝ UN Comtrade առցանց տվյալների բազա

Հայաստանի հնարավոր արտահանման շուկաները. Միջին Արևելք, Պակիստան և Աֆղանստան

	Բնակչություն, մլն. մարդ, 2010թ.	Ներմուծում, մլն ԱՄՆ դոլար, 2010թ.	Տարեկան միջին աճ, 2003-2010թթ.
Իրան	73.8	960	12.2%
Հորդանան	6.0	461	10.7%
Քուվեյթ	2.8	413	12.5%
Լիբանան	4.2	615	8.9%
Օման	2.9	157	12.0%
Կատար	1.5	181	16.9%
Սաուդյան Արաբիա	26.0	2,694	12.4%
Սիրիա	21.6	227	12.6%
ՄԱԷ	4.7	1,212	18.1%
Եմեն	24.3	151	10.6%
Իրաք	32.3	457	20.9%

Աղբյուր՝ UN Comtrade առցանց տվյալների բազա

- Մերձավոր Արևելքի երկրները հայկական ընկերությունների կողմից դիտարկվում են որպես արտահանման հնարավոր նոր շուկաներ: Լիբանանի և Սիրիայի սփյուռքի ներկայացուցիչները կարող են օժանդակել այս շուկաներ մուտքի համար:
- Յուրաքանչյուր շուկայի թիրախավորումը ենթադրում է տվյալ շուկայի մանրամասն ուսումնասիրության իրականացում և շուկա մուտքի ռազմավարության մշակում:

Ոլորտային քննարկումների արդյունքում վեր հանված հարցեր

Ստորև ներկայացված են մասնավոր հատվածի առաջարկները, որոնք հավելյալ ուսումնասիրության կարիք ունեն և կարող են ներառվել ռազմավարության մեջ ռազմավարական խորհրդի որոշմամբ:

- Ոլորտի կարգավորման հետ կապված իրավական ակտեր
- Պետական ուղղակի գնումների իրականացում հայ դեղարտադրողներից
- Արտասահմանյան երկրներում հավաստագրման ծախսերի փոխհատուցում
- Դեղերի գրանցման ժամանակահատվածի և կլինիկական փորձարկումների հետ կապված պահանջների փոփոխություն
- Դեղատոմսերի դուրսգրում ոչբրենդային անվանումով
- Դեղագործության ոլորտում հետազոտությունների և մշակումների ուղղության զարգացում
- Աջակցություն փորձագիտական լաբորատորիաների ստեղծմանը և փորձագիտական ծառայությունների արտապատվիրման կենտրոն դառնալուն